ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

«Մարդկային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիրն արդիական և պահանջված է ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում: Մագիստրոսական ծրագիրը նպատակաուղղված է աշխատաշուկայում մրցունակ, բարձրորակ մասնագետների պատրաստմանը, ովքեր նույնիսկ ուսումնառության ընթացքում սկսում են իրենց կարիերան տարբեր կազմակերպությունների ՄՌԿ ստորաբաժանումներում: Մեր շրջանավարտները զբաղված են երկրի տնտեսության տարբեր ոլորտներում՝ սկսած ֆինանսականից, ավարտած հեռահաղորդակցությամբ և տեղեկատվական տեխնոլոգիաներով:

Ըստ միջազգային փորձագիտական կանխատեսումների՝ մոտակա տասնամյակում մարդկային ռեսուրսների կառավարումը աշխարհում առավել արագ զարգացող մասնագիտացումներից մեկն է լինելու, քանի որ թվայնացման պայմաններում մարդկային ռեսուրսների կառավարման գործառույթներն առավել համալիր են դառնում՝ նպաստելով ընկերությունների մրցունակության ամրապնդմանը և առաջխաղացմանը:

Ծրագրում ներառված ուսանողների գերակշիռ մասը (85%) **արդեն առաջին կուրսում սկսում են աշխատել մասնագիտական ոլորտում :**

Ծրագրի տևողությունը
1.5 տարի

Դասապրոցեսը
շաբաթական 3 անգամ
18:20-ից

Ուսման վճարը (տարեկան)
700.000 ՀՀ դրամ

Որակավորում
կառավարման մագիստրոս

ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

առաջին կուրս, առաջին կիսամյակ

1. Գիտելիքի կառավարում
2. Մարդկային ռեսուրսների պլանավորում և համալրում
3. Անձնակազմի խթանման համակարգի կառավարում
4. Փոփոխությունների կառավարում
5. Կառավարչական աշխատանքների կազմակերպում և առաջնորդում
6. Սոցիալական գործընկերության ժամանակակից հիմնախնդիրները
7. Գիտական հետազոտական մեթոդաբանություն
8. Գործարար և մասնագիտական օտար լեզու

առաջին կուրս, երկրորդ կիսամյակ

1. Կարիերայի կառավարում
2. Աշխատանքային իրավունք
3. Կառավարման հոգեբանություն
4. Մարդկային ռեսուրսների միջազգային կառավարում
5. Կորպորատիվ էթիկա
6. Կոնֆլիկտների կառավարում
7. Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման հիմնախնդիրները
8. Կառավարչական որոշումների ընդունում

Գիտամանկավարժական փորձառություն
(տևողությունը՝ 6 շաբաթ)

երկրորդ կուրս, մոդուլ 1

1. Անձնակազմի աշխատանքի արդյունքների գնահատում

Գիտահետազոտական փորձառություն
(տևողությունը՝ 10 շաբաթ)

Մարիա Արմենակի Սահակյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Բիզնես վարչարարության ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Ավելի քան 15 տարվա դասավանդման փորձ, այդ թվում մարդկային ռեսուրսների կառավարման գծով, աշխատել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում, ՀՀ վիճակագրական կոմիտեում, դասախոսություններով հանդես է եկել ՀՀ և Եվրոպայի տարբեր համալսարաններում, մասնավորապես, Լեհաստանում Կրակովի տնտեսագիտական համալսարանում (2024թ), Խորվաթիայի Պուլայի համալսարանում (2022թ), Լեհաստանում Պոզնանի տնտեսագիտական համալսարանում (2019թ), Սլովակիայի տնտեսագիտության և կառավարման բարձրագույն դպրոցում (2018թ), Լեհաստանում Բելոստոկի տեխնոլոգիական համալսարանում (2016թ) և այլն:

Անահիտ Սերգեյի Մելքումյան

Կրթական ծրագրի ղեկավար

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

տ.գ.դ., պրոֆեսոր, գործարար վարչարարության մագիստրոս(MBA): Որպես մարդկային ռեսուրսների և աշխատանքի շուկայի գծով փորձագետ ու խորհրդական, աշխատել է տարբեր միջազգային կազմակերպությունների ծրագրերում (2000-2004թթ., 2008-՝ ԵՄ TACIS ծրագրերի փորձագետ, 2005-2006թթ.՝ Emerging Markets Group ընկերություն, աշխատանքի տնտեսագետ, 2006-2007թթ.՝ Հայաստանի մրցունակ մասնավոր հատված (CAPS, USAID) ծրագրի մարդկային ռեսուրսների գծով մասնագետ): 2014-2016թթ. մասնակցել և ղեկավարել է ՀՊՏՀ Ամբերդ կենտրոնի գիտահետազոտական ծրագրեր («Գործազրկությունը և աշխատավարձի անհավասարությունը ՀՀ-ում»): Հանդիսանալով ՀՊՏՀ դոցենտ, այնուհետև՝ պրոֆեսոր, ունի գիտամանկավարժական և հետազոտական գործունեության հարուստ փորձ:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Մերի Վազգենի Բադալյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան: Ունի գիտամանկավարժական և հետազոտական գործունեության 24-ամյա փորձ՝ 2013-2014 թթ՝ ՀՊՏՀ «Կրթություն» գիտաուսումնական խմբի գիտաշխատող- հետազոտող, 2014-2015թթ՝ ՀՊՏՀ «Կրթության մոտիվացիա» գիտաուսումնական խմբի ղեկավար – հետազոտող, 2015-2016 թթ՝ ՀՊՏՀ «Բարձրագույն կրթության կառավարում» գիտաուսումնական խմբի գիտաշխատող- հետազոտող, որի շրջանակներում հրապարակվել է կոլեկտիվ մենագրություն: Մասնակցել է մարդկային ռեսուրսների կառավարման, կոնֆլիկտների կառավարման, աշխատակազմի կառավարման հարցերով զբաղվող մասնագետների դասավանդման ժամանակակից մեթոդները բարձրագույն ուսումնական հաստատություններում, նախագծերի կառավարման վերապատրաստման դասընթացներին:

Լուսինե Վահագնի Կարապետյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Բիզնես վարչարարության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու: Ունի 15 տարվա գիտամանկավարժական ստաժ, զբաղվում է նաև հետազոտական աշխատանքով: Դասավանդել է Միշկոլցի (2019 թ.), Պոզնանի տնտեսագիտության և բիզնեսի (2018 թ.), Բիալիստոկի տեխնոլոգիական համալսարաններում (2017 թ.): 2018-2021 թթ. մասնակցել է մարդկային ռեսուրսների կառավարման, քոուչինգի հմտությունների, բիզնես էթիկայի, կոնֆլիկտների կառավարման, աշխատակազմի կառավարման հարցերով զբաղվող մասնագետների վերապատրաստման դասընթացներին:

Արևիկ Սամվելի Դավթյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

Local Express Armenia ընկերության Մարդկային ռեսուրսների կառավարման գծով տնօրեն: 2018-2019թթ. - IDeA Foundation Armenia հիմնադրամի ՄՌԿ տնօրեն, 2019թ. նաև հանդիսացել է Globbing LLC ընկերության ՄՌԿ տնօրենը: Կորպորատիվ կառավարման բարձրագույն դպրոցի շրջանավարտ (Executive MBA, Մոսկվա, ՌԴ):

ԳՈՐԾԸՆԿԵՐ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մարդկային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել տնտեսության բոլոր ոլորտներում, այդ թվում, պետական և մասնավոր հատվածի կազմակերպություններում, միջազգային կազմակերպություններում, խոշոր կորպորացիաներում, փոքր և միջին բիզնեսում:

Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել և արդեն աշխատում են որպես մարդկային ռեսուրսների կառավարման ստորաբաժանումների ղեկավարներ, տնօրեններ և փոխտնօրեններ, անձնակազմի կառավարման մասնագետներ, մենեջերներ և խորհրդատուներ, աշխատանքային հարաբերությունների կառավարման մենեջերներ, կադրային գործակալներ, աշխատուժի հավաքագրման և ընտրության գծով մասնագետներ, տաղանդների հավաքագրման մասնագետներ, աշխատանքային կարիերայի և կրթության գծով խորհրդատուներ, անձնակազմի վերապատրաստման և զարգացման գծով մասնագետներ, մարդկային ռեսուրսների գծով խորհրդատվական ընկերության ղեկավարներ:

Մարդկային ռեսուրսների կառավարում մագիստրոսական ծրագրի շրջանավարտները այսօր հաջողությամբ աշխատում եմ հանրապետության խոշոր ընկերություններում և կազմակերպություններում, այդ թվում՝UCOM, Team Telecom Armenia, Soft Construct LLC, Helix Consulting LLC, Ռոստելեկոմ, Արդշինբանկ և այլ ընկերություններում:

Ողջույն, **ես Մերին եմ:** ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետի առկա բակալավրիատն ավարտելուց հետո ընդունվել և գերազանցությամբ ավարտել եմ Մարդկային ռեսուրսների կառավարման առկա մագիստրատուրան: Ուսումնառության 1,5 տարվա ընթացքում կարողացա ձեռք բերել մասնագիտական տեսական և պրակտիկ բազում գիտելիքներ, ծանոթանալ մարդկային ռեսուրսների կառավարման հմտություններին, առանձնահատկություններին ու զարգացման միտումներին:

Այս ամենն ամրապնդեց սերը ընտրված մասնագիտության նկատմամբ և օգնեց անել առաջին քայլերս մասնագիտական կարիերա ձևավորելու հարցում: Այժմ աշխատում եմ ՀՀ առաջատար ընկերություններից մեկում՝ **Յուքոմ ՓԲԸ-ի ՄՌԿ և կազմակերպության զարգացման տնօրինությունում:**

Ողջույն, **ես Նարինեն եմ**:

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ Մարդկային ռեսուրսների կառավարում առկա մագիստրոսական ծրագիրը և **այժմ աշխատում եմ «Թիմ Տելեկոմ Արմենիա» ընկերությունում՝ ՄՌԿ և կազմակերպության զարգացման տնօրինության Անձնակազմի համալրման և պահպանման բաժնի համալրման ավագ մասնագետ:**

Սովորելով ՄՌԿ մագիստրոսական ծրագրում, ստացել եմ հիմնարար տեսական և պրակտիկ գիտելիքներ, ինչը հնարավորություն է տվել աշխատաշուկայում լինել ավելի պահանջված, մրցունակ և ունենալ սիրելի, հետաքրքիր աշխատանք:

Ողջույն, ես Լիլիթն եմ:

Աշխատում եմ որպես Տաղանդների ներգրավման մասնագետ «Ջիջի» ՓԲԸ-ում:

Մինչ ՄՌԿ մագիստրատուրա ընդունվելը ստացել եմ «Քաղաքագիտության» բակալավրի և մագիստրոսի որակավորում: ՄՌԿ սովորելու ընթացքում մի շարք համախոհների հետ հիմնադրել ենք «Արցախի մայրիկների աջակցման կենտրոն» Հասարակական կազմակերպությունը, որի աշխատանքներում, կիրառել եմ ՄՌԿ ուսումնառության ընթացքում ձեռք բերած իմ հմտությունները:

Բարև, ես Ինեսսան եմ:

Ավարտել եմ ՀՊՏՀ-ի առկա մագիստրատուրան՝ Մարդկային ռեսուրսների կառավարում մասնագիտությամբ:

1,5 տարվա ընթացքում ձեռք եմ բերել մնայուն և անգնահատելի գիտելիքներ, որոնք ինձ հնարավորություն տվեցին ունենալ իմ սիրելի մասնագիտությունը և աշխատանք գտնել ՀՀ հեռահաղորդակցության ոլորտի առաջատար ընկերությունում՝ <<Յուքոմ>> ՓԲԸ-ում: